# Թումանյանը Իսահակյանի հուշերում

Հուշագրությունը եղել և մնում է առանձնակի հետաքրքրություն ներկայացնող գրական ժանր: Հատկապես ժամանակաշրջանի բացառիկ անհատականություններին, տվյալ դեպքում մեծ գրողի կյանքը կամ ստեղծագործական աշխարհը ներկայացնելու առումով: Խիստ կարևոր է նաև հուշագրի անհատականությունը: Հետաքրքիր է, եթե երկու մեծերի պարագայում է դա տեղի ունենում, և առաջնայինը դառնում է դիմացինի մեծությունը ճիշտ ներկայացնելու կարևորությունը, հուշագրի՝ ժամանակի մեջ իր խոսքի գիտակցության կարևորությունը: Իսահակյանի ստեղծագործությունների մեջ իրենց բացառիկ դերն ու նշանակությունն ունեն ժամանակակիցների մասին թողած հուշերը: Բանաստեղծը կյանքի վերջին տարիներին հասցրեց թղթին հանձնել դրանք: Վարպետի թողած հուշերը հայ մեծերից շատերի՝ Ղևոնդ Ալիշանի, Խրիմյան Հայրիկի, Սարյանի, Չարենցի, Տերյանի և այլոց կյանքի և գործունեության վրա լույս սփռող անգնահատելի  վկայություններ են, որոնց միջոցով ճանաչվում է նաև Իսահակյանի մարդկային նկարագիրը:

Իսահակյանը ոչ միայն գրչի վարպետ էր, այլև՝ անկեղծության, մեծահոգության, սիրո ու նվիրումի… Մեծանուն Վարպետին ճանաչող մարդիկ հաճախ են իրենց հուշերում խոսում նրա՝ մեծ սրտի տեր լինելու մասին: Նա բարձր էր գնահատում և անկեղծորեն բարձրաձայնում ոչ միայն իր սերնդակիցների շնորհների մասին, այլև նոր սերնդի ստեղծագործողների համար ամենուր ուղի էր հարթում:

Իսահակյանն իր հուշերում մի քանի անգամ անդրադարձել է նաև Թումանյանին: Թերևս այդ կերպ նա փորձում էր ոչ միայն իր անկեղծ գնահատականը տալ նրա հանճարին, այլև ավագ ընկերոջ, ոգեկից բարեկամի կորստի ցավը մեղմել, մարդկայնորեն իր ակնածանքն ու  սերն արտահայտել, արժանին մատուցել մեծ հային:

Նրանց ստեղծագործական ուղու զուգահեռների մասին գրականագետները բազմիցս խոսել են, անդրադարձել են նաև նրանց մարդկային շփումներին:

Այս զեկուցումը ևս մեկ փորձ է նորից անդրադառնելու երկու մեծերի շփումներին, որոնք հայ գրականության հիշարժան ու չխամրող էջերից են:

Հովհաննես Թումանյանն ու Ավետիք Իսահակյանը ճակատագրի բերումով նույն ժանակաշրջանի ծնունդ էին՝ իրենց մեջ ամփոփելով դարի խորհուրդը: Նրանք ժառանգեցին ազգի ուժը, անսասան ոգին, քայլեցին դժվարին ճանապարհներով. մեկը՝ ոտքի տակ ունենալով հայոց՝ արյուն-քրտինքով պարարտ հողը, մյուսը հաճախ օտար-ամայի ճանապարհներով՝ միշտ մտքով թռչելով դեպի հայրենի եզերքը, որի ազատագրման մարտիկները պիտի դառնային՝ իրենց գրչի ողջ զորությամբ ծառայելով նրան: Պետք է ողբային հայոց վիշտը, երգեին ու փառաբանեին վերելքներն ու հաղթանակները:

Երկու մեծերի ճակատագրական հանդիպումը տեղի է ունեցել հեռավոր 1892 թվականին: Գևորգյան ճեմարանի սան երիտասարդ Իսահակյանը Թիֆլիսում այցելում է Թումանյանին՝ վճարելու նրա բանաստեղծությունների առաջին հատորի վաճառված օրինակների գինը և այդ առիթով ծանոթանալու նրա հետ: Առաջին հանդիպումը հաճելի տպավորություն է թողել պոեզիայի աշխարհում նոր-նոր քայլեր անող երիտասարդի վրա: Այդ հանդիպման մասին տարիներ հետո Իսահակյանը գրել է .« *…Վարմունքը պարզ էր և ընկերական: Նրա դեմքը ողողված էր, կարծես, մի ներքին լույսով: Փարթամ մազերով, աչքերը խոր ու խոհուն: Ժպիտը միշտ ներկա էր դեմքի վրա: Հազիվ քսան և չորս տարեկան էր, ուրախ, զվարթ, երիտասարդ»*[1]:

Առաջին հանդիպման ընթացքում Իսահակյանն արտասանել է Թումանյանի բանաստեղծություններից մի քանիսն ու նշել, որ ինքն էլ է բանաստեղծություններ գրում, ինչը լսելով, Թումանյանը խնդրել է հաջորդ այցին իր հետ վերցնել բանաստեղծությունների տետրը: Ավագ գրչակցի խոսքերը ոգևորել են Իսահակյանին. չէ որ հենց ինքը՝ Հովհաննես Թումանյանը, ճեմարանականների շրջանում արդեն հայտնի բանաստեղծն էր ուզում ծանոթանալ իր գրվածքներին:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի առաջին տասնամյակում Իսահակյանի կյանքն անցնում էր հիմնականում երկու քաղաքում՝ հայրենի Ալեքսանդրապոլում և հայոց մշակույթի կենտրոն Թիֆլիսում:

Թիֆլիսը սիրելի էր Իսահակյանին նաև այն պատճառով, որ այնտեղ էր ապրում իր սիրելի ընկերը՝ Հովհաննես Թումանյանը: Երիտասարդ Իսահակյանն ամեն անգամ

---

[1] Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, 5-րդ հատոր, «Իմ հուշերից», Երևան, 1977թ., էջ 50:

Թիֆլիս մեկնելիս առիթը բաց չէր թողնում իր ավագ ընկերոջը կրկին հանդիպելու համար: Այս մասին իր հուշերում գրում է նաև հայ անվանի մանկավարժ, ազգագրագետ Ստեփան Լիսիցյանը. *«Այդ տարիներին ահա աննկատելի, բայց շատ բնական կերպով սկսվեց և հետզհետե ամրացավ Ավ. Իսահակյանի մտերմությունը Թումանյանի հետ: Ընդհանուր շատ բան կար նրանց մեջ. երկուսի ներշնչման աղբյուրն էլ ժողովրդական բանահյուսությունն էր, և մեկը մյուսին կարծես լրացնում էր: Եթե մեկը գերազանցապես վիպասան էր՝ էպիկ, մյուսը՝ գերազանցորեն քնարերգու-լիրիկ: Եթե մեկը գերազանցորեն ստեղծում էր ժողովրդական պատկերներ, մյուսը միաձուլվում էր ժողովրդական զգացմունքների հետ»*[2]:

19-րդ դարի վերջին մշակութային շատ գործիչներ, որոնք ապրում ու ստեղծագործում էին Թիֆլիսում, հաճախ էին հանդիպում Թումանյանների Բեհբության 50 հասցեում գտնվող տան վերին հարկում ու զրույցի բռնվում: Իսահակյանի հուշերում ընթերցողը անմիջականորեն հաղորդակցվում է «Վերնատան» մթնոլորտին, այնտեղ տիրող ջերմ ու ստեղծագործական միջավայրին, զրույցներին, որոնք ձգվում էին մինչև ուշ գիշեր: Քննարկում էին ինչպես իրենց ստեղծագործությունները, մամուլում տեղ գտած ուշագրավ նյութերը, այնպես էլ՝ հասարակական - քաղաքական կյանքը. *«Հավաքույթներն անցնում էին աշխույժ, ուրախ և սրտալի: Որքան նախաճաշեր դառնում էին ճաշ, ապա երեկոյան թեյ և վերջը՝ կեսգիշերներից շատ անց, ընթրիք ու լուսաբաց»,* - իշում է վարպետը: Ձմռանը վառվռուն բուխարիկի շուրջը նստած՝ կատակել են, անվերջ զրուցել, խոսել, վիճել.... Ի՜նչ նյութերի շուրջը ասես՝ չի դարձել նրանց զրույցը: [3]

Կանոնավոր կերպով շաբաթը մեկ-երկու անգամ հավաքվում էին Թումանյանների տանը՝ իրար տեսնելու և զրույց անելու. *«Օհաննեսը կենտրոնաձիգ անձնավորություն էր՝ հյուրասեր, մարդամոտ: Զրույցի համար հոգի էր տալիս: Օրվա որ ժամին գնայիր նրա մոտ, ձեռքի գործը կթողներ և, ժպիտը դեմքին, կնստեր զրույցի»:* Թումանյանների հյուրընկալ հարկը դարձել էր մշակույթի գործիչների հավաքատեղին: Թումանյանի՝ մարդամոտ, հյուրասեր, անկեղծ ու սրտաբաց ընկեր ու բարեկամ լինելու մասին

---

[2] Ավիկ Իսահակյան, Ավետիք Իսահակյան, գիտական կենսագրություն, Երևան, 2000թ., էջ 555-560:

[3] Տե՛ս, Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, 5-րդ հատոր, «Իմ հուշերից», Երևան, 1977թ., էջ 54:

Իսահակյանը շատ է խոսել: Նրա բնորոշմամբ՝ Թումանյանը «զրուցասեր», «կատակասեր», «կախարդիչ մտքի», «լեզվի» ու «ճաշակի» տեր էր, «անչափ հմայիչ», «սիրված» ու «հարգված»: Նա ամեն սեղանի սպասված հյուրն էր, «հասարակության զարդը», «խնջույքների, հրավերների հոգին», «շողշողուն ջահը», գրեթե բոլոր սեղանների «թամադան»: Իսահակյանն ահա այսպես կարոտով ու ջերմությամբ է տարիներ հետո հիշել «Վերնատան» այդ հրաշալի օրերն ու Թումանյանին:

1896 թվականին Իսահակյանը կրկին մեկնում է Թիֆլիս:

Ծանր ժամանակներ էին հայ ժողովրդի կյանքում. Թուրքիայում հայ ժողովուրդը խեղդվում էր արյան մեջ: Ցարական կառավարության հայահալած քաղաքականությունը գնալով առավել մեծ ընդգրկում և թափ էր առնում: Ամենուր փակվում էին հայկական դպրոցները, թերթերը, գրադարանները, մշակութային բոլոր օջախները, բանտերը լցվում էին ազատագրական պայքարի համակիրներով. բանտարկված էին նաև Ղ. Աղայանը, Շիրվանզադեն…. Թիֆլիս կատարած այդ այցի ժամանակ Իսահայանը հանդիպում է Դերենիկ Դեմիրճյանին: Մի երեկո նրա հետ գնում են Թումանյանի մոտ: Ժամերով նստում են, զրուցում: Այդ օր Իսահակյանը գիշերում է Թումանյանների տանը: Տարիներ հետո այդ այցի մասին Վարպետն իր հուշերում գրել է. «*Ուշ գիշեր էր, երբ պատրաստվեցինք քնելու: Օհաննեսը լամպը ձեռքին կանգնել էր անկողնուս մոտ:*

*— Ա՛յ տղա, շատ մի՛ տխրիր, վերջը լավ կլինի: Հայ ժողովուրդը ավելի ծանր օրեր է տեսել: Մի՛ հուսահատվիր, էս էլ կանցնի»:*[4]

Ավագ ընկերոջ լավատեսությունը, հավատը հայ ժողովրդի լուսավոր ապագայի հանդեպ վարակիչ էր, ոգևորող: Այդ խոսքերից հետո միայն Իսահակյանը կարողանում է թեթևացած քնել:

Թումանյանն ապրում էր իր ժողովրդի ներկայով, սրտի բոլոր լարերով զգում էր նրա հոգսն ու վիշտը: Որքան էլ լավատեսական էին Թումանյանի խոհերն ու մտորումները, հայ ժողովրդի դառը ճակատագիրն իր լուրջ ազդեցությունն ուներ նրա կյանքի, գրական ու հասարակական գործունեության վրա: Մի կողմից հայ ժողովուրդի ծանր դրությունը՝

[4] Տե՛ս, Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, 5-րդ հատոր, «Իմ հուշերից», Երևան, 1977թ., էջ 52:

Օսմանյան կայսրության և Ցարական Ռուսաստանի հայահալած քաղաքականության հետևանքով, մյուս կողմից՝ առողջական ծանր վիճակն ու ընտանեկան ողբերգությունը՝ սիրելի հոր վախճանը: Այդ դժվարին օրերին Թումանյանը Դսեղում էր՝ հայրենի եզերքում: Հենց այդ հողն ու ջուրն էլ նրան ուժ ու կորով տվեցին՝ դիմակայելու կյանքի դժվար փորձություններին:

1906 թվականին Իսահակյանը մեկնում է Դսեղ, ուր ընտանիքի հետ տեղափոխվել էր Թումանյանը: Լոռվա այդ չքնաղ բնաշխարհը, որն իր դրոշմն էր դրել Թումանյանի ստեղծագործությունների վրա, իր ողջ վեհությամբ ներկայանում է Իսահակյանին: *«Լոռումն եմ. Սարոյի, Սաքոյի, Անուշի հայրենիքում. Օհաննեսի հետ, նրա հարկի տակ: Ի՜նչ կար ավելի քաղցր, քան այդ ժամերը: Օհաննեսի հետ շրջում ենք Դսեղ գյուղում, նրա շրջակայքը …Հին, հնադարյան գյուղ է Դսեղը, ամեն կողմ անցյալի բեկորներ…»,-* գրում է Իսահակյանը: Հենց այդ հայրենիքն էլ՝ «*իր աշխատող ու պայքարող ժողովրդով բանաստեղծորեն վերակառուցվեց նրա անմահ գործերի մեջ*»: Այդ զրույցների ընթացքում Թումանյանը շատ է խոսել իր նախնիների, հարազատների, սիրելի հոր մասին: «*Ինչ որ կա իմ մեջ լավ բան՝ հորից է»,* - ասել է նա: Ընտանիքն ու հարազատները Թումանյանի կյանքում վեր էին ամեն ինչից: Նրանցից վեր թերևս կարող էր լինել միայն հայրենիքը: Ծնողներին նվիրված որդին, ընտանիքի լավ հայրը սրտի մեծ ցավով էր ընդունում բաժանումները, իսկ կորուստները անդառնալի, երկար չսպիացող վերքեր էին դառնում անչափ զգայուն սրտի տեր բանաստեղծի համար: Չնայած՝ «նրա հետ եղողը մոռանում էր, թե աշխարհում վիշտ ու ցավ գոյություն ունի»: Թումանյանը շատ կապված էր սիրելի հոր՝ Տեր-Թադևոսի հետ: Հոր վախճանը մեծ հարված էր առանց այն էլ բազում դժվարություններ ու կորուստներ տեսած բանաստեղծի համար. «Եվ նորից, նորից պատմում է նա ինձ իր սքանչելի հոր մասին…»[5]:

Իսահակյանն իր հուշերում պատմում է իրենց միասին Անի այցելելու մասին: 1901 թվի սեպտեմբերին Թումանյանը Աբասթումանից, ուր մեկնել էր բուժման նպատակով, գալիս է Ալեքսանդրապոլ ու հանդիպում սիրելի ընկերոջը՝ Ավետիք Իսահակյանին: Ողջագուրվելուց հետո Թումանյանն ասել է, որ շատ է ցանկանում տեսնել Անին: Իսահակյանը պատասխանել է՝ դրանից էլ հեշտ բան, և խոստացել անպայման «գլուխ բերել» այդ գործը: Անին ներշնչանքի աղբյուր է եղել հենց իր՝ Ավետիք Իսահակյանի համար. Նա իրեն համարում էր Անիի քաղաքացի: Հայ մեծերից շատերն են ներշնչվել

[5] Տե՛ս, Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, 5-րդ հատոր, «Իմ հուշերից», Երևան, 1977թ., էջ 60-62:

հայոց փառահեղ մայրաքաղաքի վեհությամբ ու անկրկնելի ճարտարապետությամբ: Անին հայ ժողովրդի հավերժության, անմահության խորհրդանիշն է:

Մեկնել են Ղազարապատ՝ ողջունելու Վարպետի սիրելի մորը: Ընդամենը երկու օր են կարողացել մնալ Ղազարապատում, Իսահակյանը պատմում է, որ Թումանյանը շատ անհամբեր էր. ուզում էր օր առաջ տեսնել Անին... Ճանապարհ են ընկել: Նրանց է միացել նաև բանաստեղծ Հովհաննես Կոստանյանը: Երբ մոտեցել են Անիի ավերակներին, Թումանյանը, հուզված, հայացքը հառելով պարիսպներին, լուռ, առանց բառ արտասանելու, արագացրել է քայլերը: Երկար շրջել են հինավուրց մայրաքաղաքի ավերակների միջով: Երբ արդեն մթնել է, քայլերն ուղղել են դեպի վանահոր բնակարանը, որը միաժամանակ այցելուների համար իջևանատուն էր: Ու հանկարծ մի սարսափելի ճիչի հետ մթության մեջ հրացանի կրակոց է լսվել, գնդակն ուղղակի անցել է երեքի առջևով. Պատահականությունը կարող էր ճակատագրական լինել բանաստեղծների և հայ գրականության համար. *«Եթե մի քայլ առաջ լինեինք, ով գիտե ինչ պիտի լիներ մեր վիճակը: Պարզվեց, որ վանահայրը բացակա է, և ծառան, վախենալով, թե եկողները ավազակներ են, դիմել է անտեղի ինքնապաշտպանության:*

*- Տո՛, - ասաց Օհաննեսը ծառային, բերդանկա հրացանը տեսնելով, - մի գյուլլով երեք բանաստեղծ պիտի սպանեի՞ր»:* Ի բարեբախտություն հայ ժողովրդի՝ որևէ մեկը չի տուժել այդ օրը:

Իսահակյանը նկարագրում է, թե ինչպես են վաղ առավոտից սկսել շրջել հինավուրց մայրաքաղաքի ավերակների մեջ: Թումանյանը հիացմունքով դիտել է ամեն մի բեկորը՝ լուռ ու մտասույզ, անցյալի հետ «ներքին խոսակցությամբ տարված», «ականջը՝ անցյալի ձայներին»: Թումանյանի՝ ապրելու անհագ ցանկության, ամեն բան տեսնել, զգալ, հասցնել կարողանալու մասին Իսահակյանը գրել է. «Նրա սիրտը անկուշտ էր և անհագ, ուզում էր ամեն բան ունենալ, ամեն բանի հասնել, ամեն տեղ լինել»[6]:

---

[6] Տե՛ս, Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, 5-րդ հատոր, «Իմ հուշերից», Երևան, 1977թ., էջ 50-65:

Անին իր հիասքանչ ճարտարապետությամբ մեծ տպավորություն է թողել Թումանյանի վրա: Երբ պատրաստվել են հեռանալ Անիից, Թումանյանը վերջին անգամ նայել է Անիին և ասել. *«Ինչքա՜ն մարդ պիտի անբան-անասուն լինի, որ ձեռք բարձրացնի այս հրաշալիքների վրա»:*[7]

Հայ ժողովրդի ապագայի անորոշությունը երբեմն հուսահատության գիրկն էր նետում բանաստեղծներին. ազգային պայքարը խեղդվում էր արյան մեջ, պայքարի ուժն ու ոգին ամրապնդելու նոր ջանքեր էին հարկավոր, ոգեշնչման նոր միջոցներ: Ազգային արժեքները վերագնահատելու և արժևորելու ժամանակն էր:

Անչափ տպավորիչ են այդ այցի ժամանակ երկու մեծերի կատարած գրառումները, որոնցում զգացվում է այդ օրերի նրանց փոթորկահույզ ապրումները, հայապահպանության, ազգային պայքարի հարցում եղած պատկերացումները, արժևորած գաղափարները, ձգտումներն ու սպասելիքները: Մեծ հայրենասերների խոսքը նաև գործ էր դառնում…

Քաղաքական այդ անորոշության մեջ անգամ հայ հանճարների միտքն անընդհատ պրպտումների մեջ էր՝ գտնել հայ ժողովրդին ոգեշնչելու, քաջալերելու նոր ուղիներ… Նրանք ազգային-ազատագրական պայքարի ակունքներում էին, սիրելի ժողովրդի կողքին: Նրանք ոչ միայն գրչով, այլև իրենց ողջ կարողությամբ ծառայում էին հայրենիքին:

Ցավը մեծ էր. կորսված հայրենիք, բնաջնջման վտանգի առաջ կանգնած ժողովուրդ, ավերվող ու ոչնչացվող պատմություն: Անիի տպավորությունների մատյանում Հովհաննես Թումանյանն իր փոքրիկ քառատողն է հավերժացրել այդ օրերին.

Մենք փառքեր ունենք թաղված հողի տակ,
Մենք հույսեր ունենք պահված մեր երկրում.
Մի՞թե հավիտյան կողբանք ավերակ,
Մի՞թե հավիտյան կըմնանք տրտում:

[7] Տե՛ս, Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, 5-րդ հատոր, «Իմ հուշերից», Երևան, 1977թ., էջ 56-58:

Այս գրառմանը խիստ համահունչ է և Իսահակյանը գրառումը. *«Անի,- սանսկրիտ-մայր լեզվից է բխել, և կրակ, հուր կնշանակե, կրակի դիցուհի, և թող նա, պանծալի Անին, լինի անշեջ հուր հայության սրտում վառելու և բորբոքելու ազատության սերը և լինի մեր վերածնության ֆենիքսը»:*

20-րդ դարի սկզբի քաղաքական թոհուբոհում մշտապես թիրախավորվում էին մշակութային ակտիվ գործիչները: Հայ ժողովրդի պայքարը թուլացնելու համար բազմաթիվ մտավորականներ բանտարկվեցին: Նրանց մեջ էին նաև Իսահակյանն ու Թումանյանը: Այս դժվարին իրավիճակում առավել ամրապնդվեց Թումանյանի և Իսահակյանի մտերմությունը:

1908 թվականի դեկտեմբեր ամսին ցարական կառավարությունը բազմաթիվ մշակութային գործիչների, այդ թվում նաև Թումանյանին ու Իսահակյանին ձերբակալում է և վեց ամիս պահում Թիֆլիսի Մետեխի բանտում: *«Կամերաներով դրացի էինք իրար: Բանտում լրացավ, փետրվար ամսին, Օհաննեսի 40-ամյակը: Այդ առիթով նա գրեց «Վայրէջք» գեղեցիկ բանաստեղծությունը: Մենք տխրության ու ուրախության խառն զգացմունքով տոնեցինք նրա տարեդարձը»*[8], - դարձյալ հիշում է Վարպետը:

Այդ հանդիպումը վերջինը եղավ նրանց կյանքում…

Թումանյանն ամեն կերպ փորձում էր սիրելի ընկերոջը հեռու պահել այնքան ժամանակ, քանի դեռ երկիրը չի խաղաղվել, քանի դեռ վտանգը չի վերացել. մինչև վերադարձի համար հարմար պահ լինի…

Երկար դեգերումներից հետո՝ 1926 թվականին, Իսահակյանը վերադառնում է հայրենիք, կարոտով փարվում հայրենի եզերքին: Բայց ոչինչ առաջվանը չէր. չկար պաշտելի մայրը, ավագ ընկերներից շատերն արդեն կենդանի չէին...

*«Շատ տարիներ հետո, տասնվեց տարի անց, երբ արտասահմանից վերադարձա հայրենիք, ավա՜ղ, չկար Օհաննեսը: Հազար կյանքով ապրող այդ հոյակապ մարդու փոխարեն տեսա մի անշուք հողակույտ և մի մեծ լռություն…»,* - գրել է Իսահակյանը:

---

[8] Տե՛ս, Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, 5-րդ հատոր, «Իմ հուշերից», Երևան, 1977թ., էջ 63:

Անհամեմատ սակավ են պահպանվել Իսահակյանի և նրա ստեղծագործության մասին թումանյանական գնահատականներն ու բնորոշումները: Այդ փոքրիկ պատառիկների մեջ անգնահատելի են վրաց բանաստեղծ Իոսեբ Իմեդաշվիլու հուշերը: Թումանյանի հետ իր ծանոթության մասին խոսելիս Իմեդաշվիլին ասել է. *«Մեր խոսք ու զրույցի թեման համարյա միշտ նույնն էր՝ գրականություն, արվեստ: Մի անգամ զրույցի ընթացքում հարցրի Թումանյանին.*

*- Ձեզ նման՝ իբրև բանաստեղծ, հայերը ո՞վ ունեն:*

*- Ունեն, և ավելի լավը, պատասխանեց Թումանյանը ժպիտով, - Իսահակյանն ավելի մեծ բանաստեղծ է:*

*- Իսահակյա՞նը, - հարցրի ես: -*

*- Այո՛, խոսքարվեստի վարպետ է, մեծ հուզերի երգիչ»*[9]:

Պահպանված նույնիսկ փոքրիկ տեղեկություններն ու հուշերի պատառիկները Թումանյանի՝ Իսահակյան ընկերոջ, Իսահակյան ստեղծագործողի հանդեպ ունեցած վերաբերմունքի մասին պատկերացում կազմելու հնարավորություն են տալիս:

1923 թվականի մարտի 23-ին, 54 տարեկան հասակում դադարեց բաբախել «հանճարեղ լոռեցու» սիրտը…

Մեծ մարդկանց մահով սկսվում է նրանց հավերժական կյանքն ու անմահությունը: Նրանք անմահ են սերունդների հետ, ժողովուրդների հետ, նրանք անմահ են մարդկության հետ: Նրանք ապրում են մեզ հետ, իրենց ծնած ժողովրդի հետ: Այն անկշռելի, հարուստ ավանդը, որ նրանք թողել են, բավական է, որ նրանք հավերժանան…

Նրանց ստեղծագործ ոգու ներդաշնակության, ոգեկցության բնութագիրն է նաև Տերյանի գնահատականը. «Դարերի տառապանքն է խոսում մեր ժողովրդի բերանով: Այս ժողովրդին մեր ինտելիգենցիան չի կարող հասկանալ, ու՞ր մնաց օտարը: Մեր նոր գրողներից Թումանյանը և դու, միայն երկուսդ, զգում եք մեր ժողովրդին: Ձեզնից հետո կամ նոր, բոլորովին նոր երգ պիտի ասել, կամ պիտի լռել»: [10]

---

[9] Սուսաննա Հովհաննիսյան, «Վերնատուն», Երևան, 2018թ., էջ 154:

[10] Տե՛ս, Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, 5-րդ հատոր, «Իմ հուշերից», Երևան, 1977թ., էջ 112-120:

Շուշան Հովակիմյան

Ավ. Իսահակյանի տուն-թանգարանի

ավագ գիտաշխատող